

ԿԱՐԾԻՔ

ԱՐՏԱԿ ԷԴՎԱՐԴԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
1918-1920 ԹԹ.» Է.00.01 «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության խնդրահարույց հիմնահարցերից մեկը հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության համակողմանի լուսաբանումն է: Անցյալի կնճռոտ խնդիրների վերհանումը, դրանց առարկայական քննարկումը ոչ միայն լույս է սփռելու անցյալի վրա, այլև կարևոր ուղենիշ կարող է հանդիսանալ երկու ժողովուրդների ընդհանուր ապագան կառուցելու ճանապարհին:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Վրաստանի նորանկախ հանրապետություններում պատմագիտական և հասարակական լայն քննարկման առարկա դարձավ 1918-1921 թթ. հայ-վրացական փոխհարաբերությունների պատմությունը: Երկու դրացի ժողովուրդները թեև վերականգնեցին իրենց անկախությունը, սակայն չկարողացան արտաքին վտանգների դեմ միասնական պայքար մղել: Ավելին, Վրաստանը, որպես քրիստոնեական պետություն, պանթուրքական արշավի դեմ Հայաստանի հետ միասին գործելու փոխարեն, ոչ բարյացակամ վերաբերմունք որդեգրեց:

1918-1921 թթ. հայ-վրացական քաղաքական փոխհարաբերությունները հիմնականում պայմանավորված էին հետևյալ գործոններով՝ սահմանային-տարածքային խնդիրներ, Հայաստանի համար Վրաստանի ունեցած բացառիկ տարանցիկ դիրք, արտաքին թշնամու դեմ միասնական ճակատ կազմելու խնդիր, անդրկովկասյան համատեղ գույքի բաժանման խնդիր, Վրաստանում և հատկապես մայրաքաղաք Թիֆլիսում բավական մեծ թվով հայ բնակչության առկայություն ու այդ հանգամանքի հանդեպ վրաց հասարակության ունեցած ոչ բարեհաճ վերաբերմունք:

Նշված ժամանակաշրջանում երկու նորանկախ պետությունների միջև տեղի ունեցած ամենացավալի իրադարձությունն, անշուշտ, պատերազմն էր: Վրաստանի ցուցաբերած անհիմն և անարդար տարածքային հավակնությունները զսպելու համար Հայաստանի իշխանություններին պատերազմից բացի ուրիշ այլընտրանք չթողեցին: 1918 թ. դեկտեմբերյան պատերազմը թեև կարճ տևեց, սակայն խնդրի կարգավորումը բավական երկարեց:

Պատերազմը Հայաստանի համար որոշ դրական ելք ապահովեց՝ ի վերջո վերականգնվեց հաղորդակցությունը Վրաստանի տարածքով, դադարեցվեցին Լոռու

հայ գյուղացիության հանդեպ վրացիների կողմից կիրառվող բռնությունները, վերջապես պատերազմի արդյունքում Լոռին մնաց Հայաստանի կազմում: Սակայն պատերազմից կարելի էր խուսափել, եթե Վրաստանի կառավարությունը ցուցաբերեր համապատասխան խոհեմություն և չփորձեր հարևանի ծանր կացությունից օգտվելով՝ մեծապետական նպատակներ առաջ քաշել վերջինիս կենսատարածքների հաշվին:

Արդեն շուրջ եռեսուն տարի է, ինչ Հայաստանը և Վրաստանը կրկին անկախ պետություններ են: Հայ-վրացական միջպետական փոխհարաբերություններում, հակառակ ցուցադրվող ցանկություններին, լարվածությունը պահպանվում է գրեթե նախկին ձևով: Շուրջ 100 տարի առաջ տեղի ունեցած պատերազմն ու շրջափակումը չլուծեցին այն խնդիրները, որոնց համար տեղի ունեցավ պատերազմը: Երեսուն տարի հայերը և վրացիները հնարավորություն են ունեցել ոչ միայն ազատորեն ուսումնասիրելու, այլև դասեր քաղելու իրենց միջպետական փոխհարաբերությունների սխալներից: Սակայն, առ այսօր նման հետևություններ գործնականում չեն արվում:

Այս տեսակետից արդիական է շարունակում մնալ 1918-1921 թթ. հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը: Թե՛ Հայաստանում, և թե՛ Վրաստանում այս ուղղությամբ բավական աշխատանք է կատարվել: Հայ-վրացական հարաբերությունների պատմությունն ուսումնասիրվել է տարբեր կտրվածքներով:

Ահա նման արդիական խնդրի՝ գիտական-վերլուծական քննությանն է նվիրված նաև ատենախոս Արտակ Ղազարյանի սույն շահեկան ուսումնասիրությունը: Կրկին արձանագրենք, որ խնդիրը լայն առումով բավականին քննարկվել է հատկապես էտիափրոլոգիայի շրջանի հայ պատմագիտության կողմից, բայց ատենախոսի առաջադրած հարցարդումով և ամբողջական ուսումնասիրվում է առաջին անգամ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից (11 ենթագլուխներ), եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Հեղինակը ժամանակագրական և հիմնախնդիրների դասակարգման սկզբունքով ներկայացրել է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը 1918-1920 թթ.:

Առաջին գլխում՝ «Պետականության վերականգնումը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացումն ու գործունեությունը 1918 թ. երկրորդ կեսին: Փախստականության հարցը», ատենախոսը նախ ներկայացնում է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացման ամբողջ ընթացքը: Այնուհետև նկարագրում և վերլուծում է՝ Արշակ Ջամալյանի կատարած ծանր աշխատանքը, ներկայացնում վերջինիս սկզբունքային դիրքորոշումը միջպետական հարաբերությունների ձևավորման և կայացման գործում: Ատենախոսն առանձնացնում է նաև այս շրջանում դիվանագիտական ներկայացուցչության Տեղեկատվական բյուրոյի

ստեղծումը, որն առանցքային դեր ունեցավ դիվանագիտական ներկայացուցչության ամբողջ գործունեության ընթացքում:

Ատենախոսը փաստարկված ներկայացնում է 1918 թ. նոյեմբերին հայ-վրացական դիվանագիտական առճակատում, որն ավարտվեց դիվանագիտական ներկայացուցչության ժամանակավոր փակումով և հայ-վրացական կարճատև պատերազմով: Հեղինակը գնահատում է նաև 1918 թ. դեկտեմբերին Ախալքալաքում ստեղծված բարդ կացությամբ պայմանավորված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հոգսաշատ գործունեությունը: Այստեղ արժևորված է Ա. Ջամալյանի ջանքերը հատկապես Ախալքալաքի գաղթականներին աջակցելու առումով: Միաժամանակ ատենախոսը չի զլանում արդարացիորեն քննադատելու Վրաստանի իշխանությունների ցուցաբերած նենգ քայլերը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության դեմ մասնավորապես և ՀՀ դեմ ընդհանրապես:

Երկրորդ գլխում՝ «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը 1918 թ. վրաց-հայկական պատերազմին հաջորդող ժամանակահատվածում (1919 թ. հունվար – 1920 թ. վերջ)», ատենախոսը նախ ներկայացնում է հաշտության բանակցություններում ՀՀ դիվանագիտական պատվիրակության դերը: Այստեղ խոսվում է դիվանագիտական հարաբերությունների վերականգնման և Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության վերաբացման մասին: Հեղինակը վերլուծում է վրացական կողմի՝ Ա. Ջամալյանին ՀՀ ներկայացուցիչ չնշանակելու պնդումը: Ատենախոսության մեջ բերվում են այն փաստարկները, որոնցով պայմանավորված հայկական կողմը տեղի տվեց, և Ա. Ջամալյանի փոխարեն ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվեց Լևոն Եվանգուլյան, ով ընդունելի էր համարվում Վրաստանի կառավարության կողմից:

Լ. Եվանգուլյանը, չնայած հիվանդությանը, բավական լայնածավալ աշխատանք է իրականացնում: Մասնավորապես նրա եռանդուն ջանքերի գործադրմամբ 1919 թ. նոյեմբերին ստորագրվում է ՀՀ համար կարևոր նշանակություն ունեցող ազատ տարանցման մասին պայմանագիրը (3 տարով): Լ. Եվանգուլյանը մեծ աշխատանք կատարեց նախ Սուխումում հյուպատոսարան բացելու և Սուխում-Սոչիի շրջանի հայ բնակչության խնդիրների կարգավորմանը գորավիզ լինելու առումով: ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը կարողացավ հյուպատոս նշանակել նաև Սոչիում: (Արշակ Ջամալյանի օրոք հյուպատոսարաններ էին բացվել Բաթումում և Փոթիում):

Այս գլխի վերջում փաստարկված ձևով արժևորվում է նշված ժամանակաշրջանում Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչության, Փոթիի և Բաթումի հյուպատոսարանների կատարած դերը Հայաստանի Հանրապետության համար կենսական համարվող պարենային, առևտրային հարաբերությունների կարգավորման, տարանցիկ ուղիների ապահովման գործում:

Երրորդ գլխում՝ «Դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը ռազմամթերքի և հայկական ունեցվածքի Հայաստան տարանցման, զինակոչի և վրացադրբեջանական դաշինքի հարցերում», նախ կարևորվել է Վրաստանում գտնվող ՀՀ ռազմական ունեցվածքը Հայաստան տեղափոխելու գործում դիվանագիտական ներկայացուցչության գործադրած ջանքերը: Վրացական իշխանությունները Հայաստանի Հանրապետության ռազմական գույքը վերադարձնելու համար փաստացի պահանջում էին հրաժարվել հայկական տարածքներից:

Ատենախոսը համակողմանի, փաստարկված ներկայացնում է ՀՀ բազմաբովանդակ հարաբերությունները Ռուսաստանի հարավի ռազմաքաղաքական կազմավորումների հետ: Հետաքրքիր է, որ խնդիրը դիտարկվում է Վրաստանի և Ադրբեջանի միջև 1919 թ. հունիսի 16-ին կնքված ռազմաքաղաքական դաշինքի համատեքստում: Անտոն Դենիկինի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումը ռազմական տեսակետից կենսական էր Հայաստանի համար: Այստեղ ևս գնահատվում է դիվանագիտական ներկայացուցչության կատարած դերը:

Չորրորդ գլխում՝ «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը սահմանային-տարածքային և հայ-վրացական դաշինքի ձևավորման ուղղությամբ 1919-1920 թթ.», նախ ներկայացվում է Տիգրան Բեկզադյանի՝ որպես Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի իրականացրած քայլերը հայ-վրացական հարաբերությունների զարգացման ուղղությամբ՝ հատկապես 1920 թ. մայիսի 7-ին ռուս-վրացական պայմանագրի համատեքստում: Վրաստանը շարունակում էր ցույց տալ իր հավակնությունները Ջավախքի և Լոռու հանդեպ, շարունակվում էին զենքի տեղափոխման համար հարուցված դժվարությունները, կրկնվում էին առանց հայկական կողմի գիտության և համաձայնության վրացական գորքերի տեղաշարժերը Արդահանում:

Ատենախոսը վերլուծում է 1920 թ. աշնանը տեղի ունեցած հայ-թուրքական պատերազմի ժամանակ Վրաստանի աջակցությունն ապահովելուն գործադրված ջանքերը: Դիվանագիտական ներկայացուցչությանը, ինչպես նաև Թիֆլիս մեկնած Ռուբեն Տեր-Մինասյանի գլխավորած պատվիրակությանը չհաջողվեց վրացիներին մեր կողմը գրավել:

Եզրակացության մեջ ատենախոսը հանրագումարի է բերել աշխատանքի հիմնական արդյունքերը:

Ինչպես տեսնում ենք, բազմաթիվ նորահայտ վավերագրերի օգտագործմամբ, ատենախոսը առաջին անգամ ամբողջական ներկայացնում է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործությունը Վրաստանում 1918-1920 թթ.: Այս տեսակետից աշխատանքը յուրօրինակ է հայ պատմագիտության մեջ:

Վերոնշյալ արժանիքների կողքին, բնականաբար, աշխատանքում նկատել ենք հետագայում շտկելի առանձին բացթողումներ և թերացումներ, որոնց վրա հրավիրում ենք հարգարժան ատենախոսի ուշադրությունը:

1. Աշխատանքի մեջ ընդգծված չի երևում վրաց հասարակության վերաբերմունքը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեությանը, իսկ հեղինակը դա կարող էր ցույց տալ հենց ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատու բյուրոյի տրամադրած զեկուցագրերի հիման վրա:

2. Որոշ դեպքերում բացակայում է ատենախոսի անհրաժեշտ մոտեցումը կամ տեսակետը տվյալ դրվագի կամ իրադարձության վերաբերյալ: Օրինակ՝ էջ 176-177-ում հեղինակը նշում է, որ Ֆիրուզ Կազեմզադեն Հայաստանը համարում էր Անտոն Դենիկինի «գործոն-սատելիտը», բայց չի ցուցաբերում իր մոտեցումն այս կարծիքին, էջ 188-ում նույն կերպ հեղինակը վերաբերմունք ցույց չի տալիս Հայաստանի տարածքների շուրջ Կիրով-Բեկզադյան բանավեճին:

3. Ատենախոսության համար շահեկան կարող էին լինել հետևյալ հրապարակումների օգտագործումը.

- Կարեն կեղծանունով հեղինակի «Արեւմտահայ գաղութ մը կովկասի մէջ», վերտառությամբ հոդվածաշարը («Հայրենիք», Բոստոն, 1930, դեկտեմբեր, 1931, յունվար, մարտ, ապրիլ, յունիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, 1932թ., յունվար, մարտ, ապրիլ): Այս հոդվածաշարը մեծապես շահեկան կլիներ Մուխոմ-Մոչիի շրջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության ծավալած գործունեությունը լուսաբանելիս (տե՛ս ատենախոսության էջ 122-131):

- Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի պատգամավոր Արտաշես Աբեղյանի հոդված-հոդվածաշարերը («Վրաստանի անկախութիւնը», «Հայրենիք», Բոստոն, 1926, սեպտեմբերի, հոկտեմբեր, «Մենք եւ մեր հարեւանները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ)», «Հայրենիք», Բոստոն, 1927, դեկտեմբեր, 1928, փետրուար, մարտ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, «Հայ-վրացական յարաբերութիւնները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ)», «Հայրենիք», Բոստոն, 1929, օգոստոս):

- Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի պատգամավոր, ռազմական և ներքին գործերի նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի երկու շահեկան հոդվածները (Ռուբեն, «Ախալքալակի պայքարը», «Դրօշակ», Փարիզ, 1926, թիւ 1, Ռուբեն, «»Ախալցխա-Ախալքալաքի հանրապետութիւնը» (պատրաստեց Խաչատուր Ստեփանյանը), «Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2013, հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43), էջ I(239)-XVI):

- Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի պատգամավոր, Հռոմում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Միքայել Վարանդյանի “Le Conflit

armeno-georgien” (Հայ-վրացական կոնֆլիկտը, Փարիզ, 1919) խիստ արժեքավոր ֆրանսերեն ուսումնասիրությունը:

- Հեղինակը չի օգտագործել նաև Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության վարչապետ Նոյ Շորդանիայի «Наши разногласия» (Մեր տարաձայնությունները, Փարիզ, 1928) ուսումնասիրությունը, այն դեպքում, երբ ատենախոսության մեջ օգտագործվել է (օրինաչափորեն) այդ աշխատանքում հնչեցված կարծիքների դեմ ուղղված Արշակ Ջամալյանի հակադարձումները («Իմ պատասխանը «Պրոմեթե»ի և «Անկախ Վրաստան»ի հրապարակագիրներին», «Յառաջ», Փարիզ, 1928, 12 յունիս-11 յուլիս):

- Հեղինակը կարող էր և պետք է անդրադառնար հետխորհրդային շրջանում ուսումնասիրվող խնդրում խորամուխ եղած վրացի պատմաբան Արչիլ Չաչխիանի «ზრძოლა საქართველოს ტერიტორიული მთლიანობისათვის 1918-1919 წლებში (სომხეთ-საქართველოს ომი)» (Պայքար Վրաստանի տարածքային ամբողջականության համար 1918-1919 թվականներին (Հայաստան-Վրաստան պատերազմը)) վերտառությամբ 2006 թ. պաշտպանած թեկնածուական ատենախոսությանը, որը որպես մենագրություն հրատարակվել է “1918-1919 წლების სომხეთ-საქართველოს ომი და დამწკვების ნაციონალისტური-ეკსპანსიონური პოლიტიკა” (1918-1919 թթ. հայ-վրացական պատերազմը և դաշնակների ազգայնական-նվաճողական քաղաքականությունը) վերնագրով, (Թբիլիսի, 2007):

- Աշխատության համար շահեկան կլինեք ռուս պատմաբանների որոշ հետազոտությունների օգտագործումը (օրինակ՝ Վադիմ Մուխանով, (“Социализм виноградарей”, или история Первой Грузинской республики: 1917-1921” Մոսկվա, 2019), («Խաղողագործների սոցիալիզմ» կամ Վրաստանի Առաջին Հանրապետության պատմություն. 1917-1921)), հատկապես, որ հեղինակը փորձել է օգտագործել շատ դեպքերում ի սկզբանե հակահայ տրամադրված արևմտյան հեղինակների ուսումնասիրություններ (Ֆ. Կազենգադե, Ս. Ջոնս, Է. Անդերսեն և Գ. Էզզե):

- Վերոնշյալից բացի, և անկախ դրանից, հեղինակն աչքաթող չպիտի աներ ժամանակի վրացական մամուլը: Նա կարող էր թեկուզ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության տեղեկատու բյուրոյի տրամադրած զեկուցագրերի հետքերով վրացական թերթերի որոշակի հրապարակումների ավելի խորը մոտեցում ցուցաբերել: Հանուն ճշմարտության նշենք, որ որոշ դեպքերում դա արվել է, օրինակ «Էրթոբա» թերթի հրապարակումների պարագայում:

4. Աշխատանքում կան որոշ եզրույթային և տեխնիկական բնույթի թերություններ ևս՝ ուղղակի մեջբերվող խոսքի ուղղագրությունը չպահպանելը, երկար նախադասությունները, ուղղագրական վրիպակներ և այլն (Օրինակ՝ էջ 15-ում պիտի լինեք «Արևելյան Անդրկովկասի մահամեղականները», ոչ թե՛ «Ադրբեջան» էջ 47-ում կես էջանոց նախադասությունը կարելի էր բաժանել մի քանի առավել դյուրըմբռնելի բարդ


նախադասությունների, էջ 126-ում պետք է լիներ “Комитет освобождения Черноморья”, ոչ թե “Комитет спасения Черноморья”):

Ինչպես տեսնում ենք, նկատված դիտողությունները չեն նսեմացնում կատարված աշխատանքը, դրանց մեծագույն մասը կարելի է հեշտությամբ շտկել մինչև ատենախոսությունը մենագրության ձևով հրատարակելը:

Այսպիսով, ամփոփելով մեր ընդդիմախոսական խոսքը Արտակ Ղազարյանի աշխատության վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել, որ Հայոց պատմություն 004 մասնագիտական խորհրդի դատին ներկայացված սույն ուսումնասիրությունն ունի պատմագիտական արժեք, 1918-1920 թթ. հայ-վրացական փոխհարաբերությունների խնդիրը ատենախոսի ընտրած կտրվածքով ամբողջական դեռ չէր հետազոտվել, և այս ուսումնասիրությունը գալիս է լրացնելու հայ պատմագիտության մեջ առկա այդ բացը: Վերջում նշենք, որ ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են սեղմագրում: Հեղինակի հրատարակած 9 գիտական հոդվածներում արտացոլված են աշխատանքի հիմնական դրույթները:

Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ հայցորդ Ա. Ղազարյանի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործությունը Վրաստանում 1918-1920 թթ.» Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին և մասնագիտությանը, ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:


Պաշտոնական ընդդիմախոս՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, պ.գ.դ., պրոֆեսոր  Խաչատուր Ստեփանյան



Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՊՄՀ գիտական քարտուղար,

 Սարիամ Իսախիրյան: